\*) Մեզան եթէ ապրանքանից մեծ լինի կը կտրուի Կլան (տախտակը):

ներ, որոնք — անուամբ լայտեր են ժողովրդին, և այս կարգի շինութիւնները կառուցանելու համար առանձին տակարարութիւն կը լինի ուսանելու և ժողովրդի մէջ:

Գ. բռնամեր. ներքին Բուլանըխայ (Կիզ գիւղի) բրուտները տեղացիներն են, իսկ վերին Բուլանըխայ համար Բաղէշի մօտ գտնուող Խուլդիք գիւղացի բրուտներից կը հրաւիրուեն, որոնք գաւառի մէջ գտնուած կաւերից կը պատրաստեն հետեւեալ ամանները.

1. Խոփ շուք խմելու փաշք աման:
  2. Խոփ-բայ—երկարամեկ՝ քաշափ բարձրութեամբ շուք խմելու աման:
  3. Խոփ կամ ափնիկ—թղալափ բարձրութեամբ մէկ կանթով շուք խմելու աման. այս երեք փաշք ամանները միասին՝ ժողովրդական բարբառով կը կոչուին Էշ-Գի: Բրուտը սոցա Կամար առանձին վարձք լաւներ, այլ մեծ ամաններըս վրայ Կաշելուով կը ծախուեն:
  4. Բուշ—կէտան նման փաշք աման, մէկ կանթով, 4 հատը  $\frac{1}{2}$  արքունի կոտ \*) ցարեն կարծէ:
  5. Կուլ-Է Բուշ (շանիթ). նոյն գնով կը ծախուի:
  6. Բէհ-Է—փաշք փաշք, որս կեկորդը խուլ կը թողնեն և փաշքիկ ծախից կը թանան որ շուրջ բոլորացնեն (նոյն գնով):
  7. Խուլի.—փաշքի բարձրութեամբ՝ բայց գլխէ դուրս լայն թողնուած և առանց կանթի, (նոյն գնով):
  8. Կուլի.—մեծ խեղդիկ և մէկ կանթով, 2 հատը  $\frac{1}{2}$  կոտ ցարեն:
  9. Խոփ. իսկ նման փաշքի՝ բայց գրեթէ մէկ արշին բարձրութեամբ, 1 հատը  $\frac{1}{2}$  կոտ ցարեն:
  10. Կի Խոփ.—կէտան կէտ մեծութեամբ, 2 հատը  $\frac{1}{2}$  կոտ ցարեն:
  11. Եշ Խոփ.—բերանը առփակ և տակարան կէտան մեծութեամբ: (նոյն գնով):
  12. Խուլ.—2-3 $\frac{1}{2}$  արշին բարձրութեամբ՝ լայնափոր, նեղ աւելով և առկից քիչ լայն բերան ու շրթունք ունեցող աման, գինը մէկ մեծ կարասի՝ 6 $\frac{1}{2}$ —6 $\frac{1}{2}$  կոտ ցարեն:
  13. Զիւլառ.—առաջինի կէտ մեծութեամբ և կէտ գնով:
  14. Խուլ յոփ.—կեկարսի կէտ մեծութեամբ և կէտ գնով:
  15. Ժ-Է
  16. Խուլ Բէհ
  17. Կուլ Բէհ
- } Խուլ յոփի քիչ փաշք և մէկ մէկից տակուիկ մի տարբեր Խուլիներ, որոնց խաւքանելուի գինը  $\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$  կոտ ցարեն է:
18. Կուլ-Է (նաեւ Կուլ ըստ ամանց) գրեթէ հաւասար բարձրութեամբ և լայնութեամբ, երկու կանթով աման (առն լուկեր) կերակուր եփելու աման, բայց սա գրեց կառուցուի. բրուտները լցիտեն պատրաստի:
  19. Միսի.—պուտակից բարձր և երկարամեկ՝ երկու կէտնով աման, գինը՝  $\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$  կոտ ցարեն:
  20. Խուլ լայնափոր և հաստ ճեփիկ.
  21. Խոփ-Է կարասանման ճեփիկ.
- }  $\frac{1}{2}$ —1 կոտ ցարեն:
22. Ժ-ԷԷ.—փաշքիկ պուտակ (կէտիկ), սա ևս գրեց կառուցուի:
  23. Խոփ (թերեւ Խուլ-Է) փաշքիկ Ժ-ԷԷ, որով իւր կը Կաշեն:

\*) Այսուհետեւ միայն խուլ կը լինենք առանց արանի բաւի:

24. Ժեթի.—մեծ ախլ, պուտուկի կամ ծափիկի մեզի:  
 25. Ժեթ (Յեթ).— ուխտի մեծութեամբ՝ բայց մէկ կ'ընտելի և տարբեր  
 մեզի գիտեալեան մեան, Յեթ <sup>1</sup>/<sub>2</sub>, կոտ ցորեն:  
 26. Ժեթի.—հուս (հուս) ունեցող քիտց (նայն գնով):  
 27. Ժեթ (տան).—շահաւ, խեցեղէն պեռի, քեղան. 4 հատը <sup>1</sup>/<sub>2</sub>, կոտ  
 ցորեն:

28. Ժեթի.—մեծ քառալ:  
 29. Ժեթ (քրդ.).—այսինքն՝ տեղաւոր. ճիշտ քառալի նման միայն մէջ  
 տեղը մի կուէ ցից կը շինուի, ապքը դրան գնելու համար:  
 30. Ժեթ.  
 31. Ժեթի.—պղտիկ տաշտ.  
 32. Եւթ.—խնաց, որով մաշտն կը հարկն իւր հանելու համար (նկ.)

VI. Դ. 1) Եթի.—6 <sup>1</sup>/<sub>2</sub>, կոտ.

33. Գեթ (քրդ.) յեթ.

34. Գեթ

35. Գեթ

} փաթիկ մանկներ, մէջը տաւուք, փող տնկու:

### Փայտեղէն մանկներ

36. Գեթ.

37. Եթի.—մեծ գդալ.

38. Եթի.—մեծ լսիկ.

39. Եթի (հագի կտակի նման).

40. Գեթ.—մեծ և խոր կտակ.

41. Գեթ.— մեծ և բացամե Գեթ.

42. Եթի Գեթ՝

43. Եթի, փայտե գոյլ.

} բարբը գրեց կտաւային.

Եթի երկարամե մանկներու միայն զիցը կտորուի՝ տանը կը կտուի  
 Գեթի, եթի զիցը և փորի կեղը գնալ և մնալ միայն ուրք՝ կը կտուի նա \*):

Ե. Սափիյ (բարբաքներ). Եւրաքանցիւր գիւղի մէջ կը գտնուեն  
 մէկ երկու սափիկներ, որոնցից շատերը շատ տեղաման մեծի էլ լու-  
 նին և զանազակ կը քերթեն մարդոց գլուխն ու երեսները, և փարձք  
 կտանան տարին մէկ մարդուն՝ տերման գլուխ: մէկ գիւղական կոտ  
 ցորեն (<sup>1</sup>/<sub>2</sub>-ը արքունի կոտի, կամ 4 սխալ—12 ֆունտի), այսինքն՝  
 մէկ մարդու համար՝ 1 գ. կոտ զարնցան, 1 կոտ աշնցան, 1 կոտ գա-  
 ռի, 1 կոտ. կտաւատ... Բայց ընդհանրապէս սափիկները լիովին ընեն  
 փարձաւորութիւն տալու համար: Հաստատուած իրաւունքով և երբեմն  
 այս իրաւունքի փոխարէնը՝ յան, յոր, յո ևայլն վճարելով բաւական  
 նախաժեշտ կտան: Մի քանի տեղեր կ'ըլլ փայլ տերման գլուխ մէկ  
 գ. կոտ ցորեն կտուի:

Զ. Քոպան մանկներ. Եւս արհեստավորները լեթի, քեթի  
 և տաւարներու պոյի-մագից կը պատրաստեն՝

\*) Պէտքովն մանկներու տնակները քրդերն կամ տանկերն զի-  
 նելով գնաց կտանեն:

1. Ս-կրիշ՝ լծան առնալից լծան առաքներու գլխին կապելու համար.

2. Կանանկից՝ կապեր, անասունները կապուելու համար.

3. Լըրուշ (սևն արքո և հրեմ).

4. Մ-սեմ՝ ժաղից և կանանկից. ջորենի, խաթ... բարդերը սալի գրայ կապելու համար: Սաքա ունին իրենց առանձին հիմունները գերազրույ առաքիաները պատրաստելու համար:

Է. Փիմալիմեր (Հնախարհաց). Սաքա կը կարկատեն հին արեխներ և սանամաններ ստանալով 1—1<sup>1</sup>/<sub>2</sub> զուրուշ, և կը պատրաստեն բշտու արեխներ—1—2 զուրուշ (8,6 կուպ.—12,9, կուպ.—17,2 կուպ.):

Մի քանի արհեստներ գիւղացին իրեն համար կը սովորի և իր քի միջոց շահագործութեան շնորհիւ նորա համար. օրինակ՝

1. Լուրուշ կամ իմ լուրուշ (արեխ), որ շնորհաբարգուտ կաշուց կը պատրաստեն:

2. Ներքեմ արիւ.—Որպէս զի սանամանը ձմեռուայ տի ու չննիկին թրջուելով չուտի, իմ կաշին կը ներկեն կաղթփոզ, աղբասաղթ, գիտարով և նոսն կնկուղ, որով սանամանը կարժիլ կապուտ գոյն ստանալով կը լըրուշ և թրջուլթիներ լծեն:

3. Դիւրուշ լըրուշ.—Կաշին երբ լըրուշ (սևն ներքեն՝ ազազ կամ ազազոց) գրին և լա փափկացաւ. ժաղերը գրայից կը քերեն և կեպեն ճմուռ (արարել) ձեռքով՝ կամ փայտի և սուր երկաթէ գործիքներու վրայ երկար բարակ քանդակ, երբ քաւական ներմակցաւ. Լուր երեւի մէջ կը քանեն և կեպեն նորից ճմուռ, ապա կը պատրաստեն բշտու լըրուշներ, Ժ-Յր (սևն արքո) լըրներ, իւրեմի լըրներ ևայլն:

Փ-Լը երկու կտոր երկարամե կաշիներ ուղարկով կը շինուի, և գրեաւորաբար սորոք քաշելու համար կը գործածուի, իսկ արիւր՝ փոկի գերն առած երկու կաշիները որ կարուած լին մկմկից, ոչ թէ ուղարկով՝ ալլ սափամե իրարու վրայ կը ծալուի և սալի համար կը ծառայիցեն. խառազանը նայնպէս փոկի նման՝ քայց երեք բարակ և ուղարն առաստաններէ կը շինուի, գերնի գրուիւր ոգակ մի կը պատրաստուի որ կը կոչուի լուշ, ներքեն գլխից ուրիշ կտոր մի կաշի կաւեղացուի՝ որ կանուանուի շիփ, իսկ ուղար կաշու միջոցով խաղկեկից կախով փախը և քարակ կտոր առաստանը՝ լըրուշ:

Տրեխներն ունեն կանուելու ժամերը.—Էթ, լըրուշ և Ժ, այն ժամերը՝ որոնց մէջ առաստաններ կանցկացեն արեւը ստաց վրայ ածբացնելու համար՝ կը կոչուեն Ժ-Էթ \*):

Դ-Էթ և Ժ-Էթ (աւփրա), այնքի, ուխտի՝ երբեմն ևս երեքի կամ արջուի ածբոյց ժորթը ազազ գնելով և Էթ-Էթ կը պատրաստեն. առաջինը երկրագործները գրանին կապելով կը գործածեն, իսկ երկրորդը հացի սնցանի տակ կը փռուի: Կամ ժորթիք առանց գրելու կը լանձնեն Էրրուիլուս (չիգան, բաշա). շինել սալու համար Լու, արեւ, Ժ-Էթ և սաքա կոչուած

\*) Երբ արեւը ծագուի և մի կտոր կաշի գնեն մէջը առանց կարելու, այդ կտորը կանուանեն արքա, իսկ երբ արեւի ծագիւրը առաստաններով կարկատուի կամ իրարու վրայ քաշուի՝ կը կոչուի Էթ-Էթ և սաքա նմանութեամբ ծաղկատարն կը կոչուի Էթ-Էթ:

մաղերը. (մերու օդի մաղերից պատրաստած մաղերն են կը կոչուեն մաղեմաղ):

Լանբու աղբամբօթին ևս կանայք օգիւրի մէջ ձգելով կը փափկացնեն և կը պատրաստեն հալի ալաց զեղ (ժաբեր) ածելու համար:

Ը. Անամարթի (Քարար). Քարար կը կոչուեն անամարթեմբը, որանք գլխաւորապէս անանոց և ժողովոց կուտան անդամները կը կապեն, անասուններ կը կռեն (մաղել, կուտ):

Եզն ու ոյխարը կը կրտեն ձուերը որոնելով և քշելով դէպի վեր՝ կաշու տակը, և յետոյ թելով ամուր կը կապեն վաշ չզալու համար, խկ գոմէշներուն՝ անորձիքի կաշին հասու ածելով բանալուց յետոյ. հրաշէկ երկաթով ջղերը խարելով կը կապեն և պորներու մէջ կանեն ձկնով խարկած ալիւր:

Կարամը լափք համար՝ տես «հիանդութեանց» բաժինը:

Թ. Յալխակներ.—որունք միայն բրդեղէն թելեր կը գործեն՝ 1 աշին զործուածքին ստանալով  $\frac{1}{4}$  զուրուշ կամ մէկ գիւղական կտա ցործն:

Թ. Բիթակներ (Կէքիմ). Բաշի գիւղական Կէքիմ պատաներից, կան այլ մարդիկ՝ որանք Կէքիմութիւն կանեն և փարձերնին սահաբութեամբ կորոշեն. 30—40 որ մէկ հիւանդ խնամող բժիշկը կտանայ շատ շատ մի եւ, մի կով, կամ 100—200 զուրուշ (8 ա. 66 կող.—17 ա. 20 կող.):

ԺԱ. Ողկաւորներ (Մեխանանիք). Այդի լուենալով գինեգործութիւնը անձանթ է Բուլանդիցոց, միայն ու կը պատրաստուի Ե՛ւէիւուրիչ նիթերից օդի քաշել չգիտեն, կը պատմեն միայն, որ մի քանի տարի առաջ Աոփ գիւղացի Աւետիսեան Ռէս Ղազարը, արմատի վրայ ձմերուկներ ծակելով՝ մէջը մեղր կանէր և կը թողնէր մնալ ալնքան ժամանակ, մինչև որ մեղրը ձմերուկի միջուկը լուծելով թորովին հեղուկ դարձնէր, ապա այս հեղուկը սոփրական կերպով (լամիլի նման) պղնձի մէջ լցելով կը շոգեխցնէր (քաշել) և կտանար առաջնակարգ Լափի Ողու հոխան կամ 400 դրամը Բուլանդիայ մէջ կարժէ 4—5 զուրուշ=34.4 կող.—43 կող.:

Դրոյի կուզան Կիփի Երսիկ (Թաղիք պատրաստողներ) ԳԵՐԱԿԻ (նալխեղ) և այլն:

Նիսա ցանցառ թուով կը գտնուեն ԳԵՐԿԻ, որանք գաւառի մէջ գտնուած փայտերի անասունները՝ փայտերի ոյխար և այն, արջ, գառ, աղուէս, ջրջուս կամ կուղբ և այլն կորտան և մորթիքը կը նախեն քաղաքացոց փայ:

Դալը աւանարակ կորացուի ձմեռ ժամանակ ալապէս. կենդանին կալածող միւսարները նախ մէկ կողքի վրայ ընկած հանդիւթաց բաւական ժամանակ կերթան ուր որ դալը կը ձգտի հեռանալ. որովհետեւ անասունը երկիւղեց շարունակ ստիպուած է նաեւ զինք

հաղածներուն, պարանոցի ջգերը կը փայտանան մէկ կողմի վրայ երկար նայելուց, ապա միտորները կանցնեն միւս կողմը, և գիտնալով որ այլեւս զայլը չէ կարող առաջուայ նման պարանոցը դարձնել զէպի բերնը, կը մտնեն և թթի վրայ թեթև ևարած մի տալով վայր կը գլորեն: Ախտերները բռնելով փայտ մի կանցիկացնեն բերանը՝ որ կը կապուի ամուր գազաթի վրայ, ապա միւս վրայ դռն ողջ ողջ դիպը կը բերն և երկանաքար մի շղթայով վերջ կախելով շնկրուն խեղդել կուտան և կը զուարճանան:

Ոչ իբրև շահագործութեան միջոց, այլ ընտանեկան պէտքը լրացնելու համար կը սովորեն 1. Խով գործել, որու ամենափոքրը կը կոչուի Խով (թունդրի փոշին թափելու համար), միջակ մեծութիւն ունեցողը՝ Խով և ամենամեծը՝ Խով (սպիտակ) \*): 2. Խու (խտր, վերախտ), որ կը պատրաստուի շէշ և Խուի: 3. Յիթի (չամբիւղ) - իբրև աթոռ, նստարան և Բ) ձիթհանքերու մէջ կառուարի փոխիկը անելու և նզմելու համար:

Սորանցով գրեթէ կը վերջանան Քուրանդիցոց (այս մարդոց) արհեստները, նոքա՝ որոնք վերոգրեալ արհեստները չգիտեն կամ հոգատէրեր չեն, կը պարապին Էլու-Բու-Բ:

Զուս Էլուի կը վարձուեն 30—40 զուրուշով (2 ա. 53 կոպ.— 3 ա. 44 կ.) և մէկ Էլուի — Էլուի 22—23—1 ա. 89 կ.—1 ա. 97 կոպ. արժողութեամբ: Ըյս մշակները կը ծառային մօտ երեք ամիս ժամանակ:

Անան մշակները կը վարձուեն 10—12 (Քուրանդիւայ) չիլայ ցորենով (44 պուլ—54 պ.), 5—6 արքունի կօտ ցորեն ևս ցանել կուտան՝ որից կառացուի մօտաւորապէս 30 արքունի կօտ ցորեն, բացի այս վարձքից անան մշակները կտանան նաև մի զոյգ գուրաց, մի շապիկ և մի փոխան մէկ Էլ (զլլաւ փաթաթոց) և մէկ Էլ (կարհկն կապա), ծառայութեան միջոցը կը տեւէ զարնան սկզբներէն մինչև ս. Յակոբայ կամ նախքան ողի պահաց շարաթը:

Էլու-Էլու կը վարձուեն 5—6 (Քուրանդիւայ) չիլայ ցորենով և նոյնչափ հանդերձներով շտապութեան ժամանակամիջոցը կսկսի զարնան սկզբներէն և կը վերջանայ Սիւ-Էլ կամ Էլու-Էլու շարաթապահին:

Ըյն մշակները՝ որոնց ծառայութեան սկիզբը կսկսի Փաղոցից (հուն) և կը վերջանայ կալուարի հետ՝ կը կոչուին Քաղոց:

Ձեռագործութիւն կանանց, կիսն աւելեալաւորներ. Գիւղացի կնոջ ձեռագործները կը պատրաստուին զլլաւորաքար Էլու Էլու, Էլու և

\*) Բախու (Բախու, հաց թեփելու համար ունենից կուտան գործիչ) և Բուիլ (այս, հացման) կառացուին ցիգաններէն:

Բոլոր մանածներին: Մանած կը պատրաստուի տղան և օգնական —  
 Լաւրէ բուրդը մանելուց յետոյ մասներու վրայ արած փաթոյթը՝ որ  
 կը կոչուի Բաթա, հետզհետէ մեծացնելով կը շինեն յօի:

Սնկիները կամ Բա իւր Կարմիր տալուց յետոյ կը ներկեն:  
 Ո՛րանցից կտտանայ զիւզացի կնիւր զանազան գոյնի մանածը.— հետե-  
 ւեալ պարզ միջոցներով՝ զորս կրնձենէ, իրեն չըջապատող բնութիւնը:

1. Թաթ գոյն ստանալու համար հարկաւոր է բաւել Բարդ, աշ-  
 տիւքն ամանի մէջ անել Բա (մարդու կամ կնոջ), Կարմիր Երկու և Լա-  
 խուած ներքի խաւոր, և մի քանի որ ջրով պահելուց յետոյ, մանա-  
 ծը գնել մէջը որոշ օրերով:

2. Կարմիր գոյն ունենալու համար, մանածը շաքարէ կեռացնեն և  
 չորացնելուց յետոյ Երկու խաւոր միասին լաւ կը խաշեն և կտա-  
 նան տեղի ու Բարդը գոյնի մանածներ:

3. Կապու գոյն ունենալու համար գեղին մանածը պէտք է թա-  
 թախել Զաւի Կարմիր Բա:

4. Կարմիր գոյնը կարելի է ստանալ՝ մանածը նախ չապ ջրով և  
 ապա յետոյ մանածը Զաւի և Բա զրան ցանկելով և լաւ խաշելով:

5. Կարմիր Երկու (Թուրք կարմիրը) ունենալու համար մանածը մի  
 քանի ժամ կըսպրի մէջ կրկնեն, յետոյ ետ Զա (եօթն անգամ) լու-  
 նալով՝ Երկու (բացարձակ գոյնով մի քաջ է) և Զաւի Երկու (կարմիր  
 ներքի) կը ներկեն:

Որ մաքոց նանդերմեքու կար ու մեք:

1. Զաւի.— տղա երկայնութիւնը ուտեցից մինչև ոտաց նաները  
 կիջնէ. նիւթը կընտրուի մեծ մասամբ Բաղէշ պատրաստուած հաստ ու  
 բարակ՝ կամ ամերիկեան կտաններէց. կտաւը իրանի լայնութեամբ կը  
 ծալուի և վերջիցեալ երկայնութեամբ կը կտրուի (բաժ, հասակ). վե-  
 ռակի կողմը լուսնաման՝ միաստով կը պորեն (պօր հանել) և կը ճղեն  
 Զաւի (օձիւք) մինչև պորտի վերև. յետոյ կը կտրեն Զաւի, Զաւի (ա-  
 նութի տակի կտորը) Զաւի (խալաւիտի վարի բարակ կտորը), Զաւի և  
 Զաւի: Որովհետև չապի թւերը փնջել չգիտեն (բիւզմա) իւրա-  
 քանիցս թւի ծալքը մէկ մէկ Զաւի կը կշեն մեծաց վրայ կապելու հա-  
 մար. որոնք կը կոչուին Զաւի, որ քողերէնէ Զաւի (նոյն բանը) բա-  
 ուի հալացի մէկ է:

Զապի վրջը սփորաբար երկու տակ կը լինի և կը նախշուի  
 Զաւի և Զաւի թիւներով (երեսասարգներուն). փողպատի երկու կողմը  
 նոյնպէս կարմիր թիւներով գուգահեռական օղղուութեամբ նախշեր կամ

\*) Զաւի առնուած կտաւը ճերմակացնելու համար, 1-2 օր կենդանի-  
 ներու թրիքի մէջ դրած կը պահեն՝ որ բաւական կապիտակացնէ, և կանուա-  
 նեն խոտ Զաւի:

գնոր կը շինեն, իսկ հուճիկները՝ մանուակ կանանց, մետաքսէ թելերով բաւական նրբութեամբ կը պատրաստեն (նախշի) և ծայրերից ԳԻՔԻ (ձուլ, փրակիկ) կը կաշեն:

Թէ չապկի և թէ միւս հանդերձներու վրայ գնացած կարելու անուններն են՝ ԳԻՔԻ, ԻԼԻՔԻ, ՇԻՒ, ԻՄԽ, բոլորն կար և խճիպ (խճպիկ, հանդերձի կարուած ծայրը ոլորել, ներսը դարձնել՝ նորից կարելու համար):

2. ԹԽԻՐ (փոխան). կը պատրաստուի Բաղէշի կտակից. երկայնութիւնը գօտեկապէ ներքեւից կսկսի և մինչև ձախ կիջնէ. կը տալը հարկաւոր լայնութեամբ կը ծալուի և ասպակի նման կը կաբուի. ասպակը նորից երկու ասկ կը ծալեն և ներքեւի կողմէն ննդ բռնելով ձկրատով կը կարեն հնոցհետէ լայն թողնելով վերեւի կողմը. այս կերպով մեռք բերուած եռանկիւնի կտորը որ կը կոչուի ԲԻՐԻ 3-Ի, վերեւ ներքեւ դարձնելով (լայն կողմը վերեւ՝ իսկ ննդ կողմը ներքեւ) կը կաշեն ասպակի վրայ և կունենան փարսիք կամ փոխանը: Կողքերը՝ երկու կողմից, բացուածքներ կը թողնեն ԶԲ անունով, վերեւի մասը երկու մաս լայնութեամբ ծալած կը կարեն և կանուանեն ԻԼԻՔԻՔԻ, որքա միջովը կանցնի ԻԼԻՔԻՔԻ որ փոխանը կը փնջէ մարմնոյ վրայ: Բոլրէ կամ ասուէ չափսերնրու խոնդանադարձները ուրիշ կտորից պատրաստուելով կը կոչուին ԻԼԻ և ոչ ԻԼԻԼ ԳԻՔԻ:

3. ԵՆՃԻ (բոլրէ կամ ասուէ) միւնայն կտորները ու անունները ունի և գրեթէ նոյն մեծով կը կարուի ու կը կարուի ինչպէս չափեր:

4. ԱԻԲԻ (պարեգօտ, կապալ).—այս հանդերձը երկու տեսակ նիւթերից կը պատրաստուի, զուրաբ ընկած կտորը՝ որ կոչուի ԻԼԻ՝ կը լինի Բաղէշի ՇԻՒ (կարմիր կտաւ), և զանազան մանաւանջ կոչուած նիւթերը. իսկ ներսը մնացած կտորը՝ որ կանուանուի ԽԽԻ՝ առ հասարակ Բաղէշի կտաւ: Երկայնութիւնը ուտերից կսկսի և, մինչև ճրնկները կիջնէ. առաջի կողմը՝ փողպատը վերեւից ներքեւ բաց կը թողնուի. և թև բերանները 1/2, արշին երկայնութեամբ կապոյտ կտաւ կը կարուի անպատճառ ԻԻԻ (կապարիկ) անունով:

5. ԻՒՄ (ԲՅՐԻՔ, կարն անթարի), կը շինուի գլխաւորաբար մանուակ երեսից և կտաւէ աստաւից, երկայնութիւնը ուտերից կսկսի և մինչև աղլապլուխները կիջնէ. Անթարու նման կը կարուի և կը կարուի:

6. ԵՂԻ (ԵՂԷՔ, բանկանակ). անթև ԻՒՄ, նիւթերը կտրուեն գլխաւորաբար մանուակից և մետաքսեղէնից (երեսի համար) և կտաւից (աստաւի համար). երկայնութիւնը կսկսի ուտերից և մինչև գօտեկապէ կիջնէ. Փողպատներից մէկի վրայ կը շարուին գլխէկտուխ կանակներ և միւս կողմը՝ ԳԻՔԻ (զայթանից):

7. Աւթ (կարմիրն պինդակ), որու ետեի նիւթը կը լինի շտի (աստի) և աստաթին՝ լիւս՝ կամ կապուտ կտու՝ երկայնութիւնը երեք չափ:

8. Լգաւոյ.—երեսը և աստաթը միայն սպիտակ կտուից կարուած ապրիան կը կոչուի շտաւ, որու աստաթի և երեսի մէջը բամբակ կը զրուի և իրար կարող զննելով կարեր տալով բշտիկի նման ուռայցներ կը գոյանայ. այս է Բւթաւ կարը:

Գիրգայի կնոք մեռ չափ մեծն ու կարուած այդ մարդոց հանգերմները սոքա են, սոցանով կը լրանայ գրեթէ և հանգերմներու թիւը. մնացածն — (պաշտաւ), լուխա չարժար կայն կը պատրաստեն գերմակները:

Կանանց հանգերմներու կտր ու մեր.

1. Աղտով շտի.—այդ մարդոց չափի նման կը մեծուի ու կարուի. նիւթը կընարուի Բաղէշի և Լանքիքեան կտուից, երկայնութիւնը՝ մինչև ծնկները:

2. Կարիւր շտի.—նիւթը կընարուի Բաղէշի շիլայից (կարմիր կտու), նախնիքներէն մնացած ճիւղերի կտորից կարմիր շապիկներ ևս կը տեւտուին մեծ ոչափ տներու մէջ. երկայնութիւնը մինչև հաները կնիքէ, և սորա՝ ինչպէս և բոլոր անթարիներու փէշեր ու ճաշերը, աստաթի կողմից. 1 փերշով լայնութեամբ կապուտ կտորներ կը կարուեն արջի անունով (թերևս ղիթ՝ տանկախան բառը, որ կը նշանակէ շտ, երէց): Կար ու մեր այդ ու կին մարդոց ապրիան շապիկներու նման:

3. Անթաթ.—երեսի նիւթը՝ մանուսայ, Գաթի, Գուի, Կաթի կայն. աստաթը՝ անպատմաւ շիլայ կտու, երկայնութիւնը՝ ուտերի, սկսած մինչև հաները:

4. Թւալ.—հանգերմներու թեւերը զուտ պաշելու համար մի ճաշը Կաթի և միւս ճաշը խոնջանի և խոնջանգարմի նման կարուած ու փնջուած առարակի մի է, ձառ կէս արջին երկայնութեամբ:

Կանանց հանգերմները կը լրացնեն Գաթալ, Դաթալ, որոնց մասին փերս գրուեցաւ և՝

5. Դաթալ.—նիւթը ասուից. մեր ֆարաշայի նման, բայց ոչ այնքան լայն և իրար անցնող փողպատներով, երկայնութիւնը ուտերից մինչև ձառը կամ Գաթալ. փողպատներն ու փէշերը կապւոտն \*) զաշթաններ կարած:

Դալմայ հանգերմը կը պատրաստեն գերմակները. հանգերմը կը կոչուի Կաթ և շտ, եթէ միայն տուն և հարսանիքի օրերուն հագնեն:

\*) Ուրիշի նմանութեամբ արծաթէ կամ պղնձէ թերթ:

Գանձանեմն Դ-ն էլ հալաւ. ամենաւեր հազածը՝ 27-ը, հին հալաւը կը կոչուի եթ, եթիլ, թթ, ամբ հալան:

**Handwritten:** *verf. b. 10. 11. 18. 19.*

1. Առաջ կամ առաջ (կաշի խաղախաղաբեւոյ միջոց). աղաղոցը երկու կերպ կը լինի. ա) ամանի մէջ կաննն բաւական քանակութեամբ աւելի քան, բ) առաջ կաշին կը զննն այս հետեւի մէջ 4—5 օր, որ լաւ կը փափկանայ, թէեւ անախտօր հոտ կարմակէ. հետեւ (պատաստուելուց) յետոյ, զուրա կը հաննն կաշին և շուտով կսկսեն քերել մազերը, և նման ձեւերով կամ տրորել առ քերակի կամ փայտի վրայ մինչև ներմակելը (մնացած զործողութիւնը տես զգրութիւն տրեխ: պատաստելու մասին): բ) Կաշին առանց աղաղոց զննելու՝ լաւ կը քերեն մազերը և մոտո երեսի վրայ սղան (մանրած, լոտած) շալցանելով՝ նպաստ կը զննն քարի տակ 1—2 օր, որ լաւ կը փափկանայ, յետոյ կսկսեն սովորական կերպով նման և տրորել մինչև ներմակալը. Պերքին կերպ կը խաղախաղաբեւոյ միայն տրեխներ, իսկ աղաղոցով գոյնաւոր, — գոյնաւոր, գոյնաւոր, կապի, կապի, խաղա...

2. Սազուն երեխրը.—Սազուն պարարաստելու համար հարկաւոր է ունենալ բորակ. Կէ և Դձ (նարայ, ոչխարի պոչի խզը). կիւր որ (բրդ.) կը կոչեն պը, նախ կաշեմն և ջրախառն ամանի մէջ պահեն ունենալու համար ԲԷ Է՛ւ, զմակը առանձին ամանոյ կը հարեն և վրան աւելացնելոյ ԹԷ՛զ ջուրը 5—6 օր, օրական 2—3 ժամ կեփեն մինչև որ բոլորովին ձերմանի, ապա կտրած ամանի հօտելու (վարի մասը, ա.բ.) մէջ լցնելոյ կուենան կաշապար կամ Խէլ տազունները. Ունենալուց խաղաղ կը կոչուի հո՛ւ:

Արեւմտեան տապանի մէջ կը ձգեն տեղի ծաղիկ և սերմ, լաւ փրփուր տալու և հետ աւնենալու համար:

Պէտք է ասել որ այս կերպ պատրաստումն տարօրէր բաւ կը յարկէ ներմակեղէնը, միայն դմակի ածախաբո՛ւ հոտը կը մնայ մէջը, որ լին կարող բարոյութիւն վերջացնել:

Սապոն եփող կանաչը փարձը կտտանան դարձնալ սապոն:

3. **Քուլտուր** (բարգրելն՝ առնառթ) նկար V, ա. կը պատրաստուի կարմիր ւոշի, որ նախ ժանկեղով՝ փրն կտակցանեն որոշ չափով առաջ ապա լաւ կը շագաթեն մինչև որ ւոշի (հաղը պմախ, պատրաստուել), վաղաքեղ կանէ մաս մաս պատրաստուած կուրչ (խրաքանցիւր մա-  
օր կը կոչուի տ+). բարդակի հիմք կը զնէ և օրական մէկ կարգ կամ  
տ+ կը շինէ, յորնաւուց յետոյ կը դրուին երկրորդ, երրորդ... զավե-  
րը մինչև որ տարրական բարձրութեանը հասնի, ամենից վերջ կլիմնուին  
(2) ւոշի, որ շէի լալն և զէպի յետ զարժան կը լինեն 10—15 օր լա-

չորացնելուց յետոյ տան յատակի մէջ տեղը, ուղիղ երգիքի գէտը, կը փորեն և թունդերը հորելով 1—2 օր լաւ կը թրծեն:

Թունդերն ունի չափու, իժու, իւր և իւրիւր, կաւից շինուած Ո՛ այս մէ ազուգան կը գրուի ական բերանը թունդի ներքի կողմը և, ախ (ձակ) գետնի միջով աստիճանաբար բարձրանալով տան տախտի մէջ դուրս կուտայ, որ մի կտոր շորով կը զգցեն և կանուանեն իւր չոր:

Թունդի շինութեան փարձքը կը լինի 2—3 արբունի կտա ցորեն:

4. Թարմեր.—պատ երեսով յարկ յարկ շինուած խորշեր՝ պատահակ նման, որ կը պատրաստուեն ագիտակ կաւից, տան տան լաւանները զարեկու համար:

5. Սարմեր.—փայտաշէն անդուկները կարելի է ասել հագուազիւտ են, զիւզալի կնոջ սնդուկը կը շինուի ագիտակ կաւից այս կերպ.

Ագիտակ կաւը մանրելով՝ աւաղի փոխարէն փաւ կանկալան են հալ շոր, 3—4 օր, օրական գրեթէ մէկ ժամ ստգերով շողալսելուց յետոյ, գրեթէ կը թթուանան, և ԴԻԵ՛ր վերցնելով կը շինեն անդուկը որ սովորաբար խորանարդ մէ ունի. աւաղի կողմը բացուածք մի կը թողնեն փայտէ զաւոր կախելու համար: Ամէն կին կը պատրաստէ իրեն համար հարկաւոր անդուկը:

6. Փիւղ և ալբ.—անդուկներու նման ագիտակ կաւից կը պատրաստեն յաւաքառ փեթակները և ալբի ամբարները. փեթակները քառակուսի և երկարամե են, բայց աւելի հսկայական են ալբի ամբարները. այս աւաղի կողմը երկու ձակեր կը թաղուեն, վերելիք՝ որ մեծ կը լինի, կը մտաւայ ալբիւր ներս ընդուկելու. իսկ ներքին՝ որ կը կոչուի Զոփ, ալբիւր դուրս տալու:

Ճաւար-բլղարի փեթակները՝ մեծ ձակի փոխարէն վերից բայց կը թաղուին, բայց միւնոյն կերպ մէկ մէկ Զոփ կուենան:

7. Բիւլի իւր.—այս արհեստի մէջ կանաչք ընտրել են կանանց ներքին հիւանդութիւնները:

Մեծ ծառ բոշկութեան փարձ լին աւներ, հեղու փարձքի համար. աւնողներն ևս լնլին բաներով կը բաւականանան:

8. Կեւի իւր.—Աղքատ և թշուառ կանաչք տուն ու տեղ, և ապելու ուրիշ միջոց չունենալով՝ հարուստներու տները մտաւայութեան կը մանեն Բոփ-Բոփ անելու, այսինքն՝ հաց թխելու. տարեկան փարձքը կը լինի 10—20 դարուշ, մէկ թօփ չիլայ և օրական 3—4 հաց:

### III. Կարմանեմետախան.

1. Կար և նորանից ստացած օգուտները.—նորանին անասնոց աւաղին անզամ տաւած կաթը՝ որ կը կոչուի Իրի, եփելով կը պնդի

և կանուանութիւնս, մէկ երկու արից յետոյ խիտը կը փոխուի ստորական կաթիլ, որու երեսը գոյացած հում սերը կը կռուի հա, երեսած կաթիլ երես գոյացածը՝ հա:

Քանիք սեր ունենալու համար, կաթիլ եղուցած ժամանակ քիչ աղբւր կանխացնեն և հոգի աւնելով կը դարսեն իրարու վրայ. որպէս զի սերի հացերը նախ նախ դուրս գան և լաւ պահպանուին՝ ցորենի հատիկներ կը ցփնեն փաներն:

Քաղցատելով երաթ (հզնունիք) գառափ հետ, Քալանդիայ լաւ աղանութիւնը լաւ հալարապրեր, մինչդեռ առաջինի համար կը պատանեն, թէ կաթիլ երեսը այնպէս թանկը սերոյց կը դառնայ՝ որու վրայ՝ պատահեր է քանի անգամ, որ այնքի ուլը ելեր է և սերի հացը չէ փշրուել:

Երան կաթիլ մէջ եթէ քիչ հա կամ հաւա անեն, կաթիլ կը պնդի և կը լինի հաւա, անելիք հաւ կամ մածունը կը կռուի հոգի. (եթէ մախրոյ չլինի, ընտիր գեղձափայտն ևս կը մախրուէ կաթիլ, ինչպէս փորձուած է):

Մածունը ջրով փանեն ձմի մէջ և, երկու կին այս ու այն կողմ կանգնած՝ կը տանեն բերեն բաւական ժամանակ երգելով՝

Հար ձմում, հար ձմում,

Ցանիմ բերիմ զմրցում,

Մեղը ու կարագը բնմի,

Քան ու թան ջուրը քրքի:

Եղ ասորութիւն միջոցին մածունը կը բաժնուի երկու մասի, ջրացին մասը կը կռուի թան, իսկ պինդը՝ հոգի:

Կարագը աղելով կը ձգեն բլղի մէջ, մինչև որ բաւական չափանայ, եւհոյ պահուց պղնձները կը շարեն փառուած թուղթի վրայ՝ և կարագը կը հալեն ունենալու համար ու (ուլ), խղի երեսը գոյացած շինուկացին սպիտակուցը կանուանեն հալի (թանիլիք):

Քանը նոյնպէս կեփեն, որ երկու մասի կը բաժանուի, այսինքն մի մասը կը պնդի՝ որ զեռ լցում կը կռուի ջու և զանոց յետոյ ջուի, միւս մասը (ջրացինը) որ աչկա անպէտք կը դառնայ՝ կանուանուի ջուի (շնուկ կամ շինուկ):

Ժամեկը այլևայլ մեծերով ու մեծութեամբ գնդամե կը յորացնեն և կանուանեն բոժ, որից մեծուներ կերակուր կը պատրաստեն (անս յորթնէ հաւն և այլն): Կամ պանրով միասին (տանձին ևս) կը սեղմեն ամաններու մէջ ձման ուտելու, և կամ առանձին ու լոյծ փնակի մէջ կը հաւաքեն ձման համար, որ աչ և աչ ծաղրական անուաններ ունի, շուշ, հալի, հոգի, և այլն:

Մածունը հաւաքելով կը պահեն մինչև ձման, որ կը կռուի

Բաժնեմուտ, համեղ ուտելիք է նաև մի և չորս հատաքար, որ նոյնպէս ձմեռան համար կը պահուի և քրդերէն կանուանուի *ափա* (ձմեռաներ):

**Պաշի գործերը.**—Պանիր ունենալու համար անպատճառ հարկաւոր է *սիւլ*-ը: Ինքզուրը կը պատրաստեն մեծ պապի տաւը մէջ, որը կանեն թանի շաւիկը և մէջը կանեն անասնոց շէն (chille—խախտց մածոցը), եղև և վերջինս չլանաւած ժամանակ՝ լոփ, որոնք երկար մնալով ամառի մէջ՝ թունդ բարդորութիւն մի կը գոյացնեն:

Երբ կաթը բիշ կտրի տաքնալ՝ (կանանց ցոյտին), չափով մի տեղ ջուր կը լցեն կաթի մէջ և կսկսեն խառնել. մէկ քանի թուէ յետոյ՝ հեղուկը կը խորհ աջոնքն՝ երկու մասի կը բաժնուի, մի մասը կը պնդի և կանուանուի *պաշի*, որ մեղքերու վրայ առնելով կը քաշեն և կերկարացնեն շինելու համար քի կամ իտ պանիրը \*): Զրալին մասը՝ որ կը կոչուի *պարմեյ* քաւ, կամ կը թափեն, կամ գոմշակներու մաշկերը կը բուսնան նորանով:

Կաթի հաշնապէս վերաանելով, Յուլանըխոց շինած պանիրը խզոտ, համեղ և բոլորաւոր յիւներ:

Պանիրը բրդիներու մէջ զննելով ժափկով միտսին լաւ կը սեղմեն և զգիլ վաղ պարմելով կը դնեն մառաններու մէջ, որպէսզի պանիրը ջրային մասը սուզուելով դուրս երթայ և չհտեցնէ. իսկ բրդիներու յորս կորով ցանի փոշի կը լցեն:

Փափկ, պանիր, շանդոյ, բուած մաճուն, տոմաստ կապն կը կոչուեն *նախա* (պաշար, պարէն, ուտեստ):

Թան ու մաճունն ևս ընդհանուր անունով կանուանուեն *Բաշա*:

## Ո Վ Տ Ե Ս Տ.

Հացի պատրաստութիւնը.—Հացը կը պատրաստեն *սիւլ*-ու մի բիշ տաք՝ և մեծ մասը տաւը ջրի մէջ կը բուծեն թիւեղ (մայեա). ապա ալիւր աւելացնելով կը շաքախեն, և կը թոզնեն 2—3 ժամ որ քի (եկ խմորի, թթուել):

Յուլիւրէն կը փռեն, հացի տախտակը կը զնեն սուֆրի վրայ և խմորը գունդ գունդ անելով՝ որ կը կոչուի *իւն* գաւի, կը շաքեն տեղանի վրայ, և զողնակով (զլան) բաժնալով կը պարզեն լոփ-ու երեսին ու կը կացնեն թունդրի կոքերուն. այդ պատճառով էլ կասեն հաց *իւն* և ոչ թիւի կամ եփել:

Հացերու տեսակներն են 1. *սլ* (լաւաշ):

2. *Բաբա*, կորցրակ մեղով:

3. *Նախա* կամ *Բաբա*, երբ բարունի ծակը շատ լայն է:

\*) Իւրաքանչիւր փաթուիթը պանիր՝ կը կոչուի *բիշի*: